9132

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«09» 07 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0121-21

Ձեռնարկողը՝ ***«Աքարա» ՍՊԸ***
Շիրակի մարզ, ք. Գյումրի Ծուլուկիձե 5

Գործունեությունը՝ ***Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0121-21

<09> 07 2021թ.

Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Աքարա» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արագածոտնի մարզ, Թալին քաղաք

Ներածական մաս. «Աքարա» ՍՊ ընկերության կողմից նախատեսվում է վերակառուցել Արագածոտնի մարզի Թալին համայնքի Քոթանյան 10 հասցեում գործող Թալինի բժշկական կենտրոնը:

Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 2.0789քմ մակերեսով հողամասի վրա: Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործնեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Վերակառուցման ենթակա տարածքը կառուցապատված է, առկա է կանաչ գոտի, ծառեր և թփեր, որոնք շինարարության ժամանակ չեն հատվելու:

Գործունեության իրականացման տեղանքին հարակից չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության պահպանվող տարածքներ, ինչպես նաև բնութագրվող տարածքում և տարածքի մերձակայքում չկան ազդեցության ենթակա պատմամշակութային հուշարձաններ:

Ըստ նախագծի բժշկական կետնրոնում գոյություն ունեցող մահճակալային ֆոնդը, համաձայն ՀՀ առողջապահության նախարարության առաջադրանքի, կրճատվել է մինչև 30 մահճակալ և ստացիոնար ու ամբուլատոր բժշկական բոլոր ծառայությունները տեղակայվել են վերակառուցվող մասնաշենքի հիվանդանոցային հատվածում: Այսպիսով,

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

վերակառուցվող եռահարկ բժշկական կենտրոնը կունենա 30 մահճակալ, և կգործեն հետևյալ բաժանմունքները

- ընդունարան,
- ախտորոշիչ և լաբորատոր բաժանմունք,
- պոլիկլինիկական ծառայություններ,
- 30 ստացիոնար մահճակալ ունեցող հիվանդանոցային ծառայություններ, ներառյալ վիրաբուժական (6 մահճակալ), մանկաբարձագինեկոլոգիական (7 մահճակալ), մեծահասակների թերապևտիկ ու մանկաբուժական (14 մահճակալ), ինֆեկցիոն մեկուսարան (3 մահճակալ)՝ առանձին մեկուսացված արտաքին մուտքով,
- շտապ բուժօգնության կայան՝ 1-2 հերթապահ բրիգադի հաշվարկով,
- ինտենսիվ թերապիայի սրահ (3 մահճակալ),
- անհետաձգելի բուժօգնության ծառայություն (2 մահճակալ),
- արյան պահպանման սենյակ,
- օժանդակ ծառայություններ, ներառյալ կենտրոնական ախտահանում, լվացքատուն, ներհիվանդանոցային դեղատուն, ինժեներական և մատակարարման ծառայություններ:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

Հողատարածքի ընդհանուր մակերես – 20.789քմ (2.0789հա)

Վերակառուցման աշխատանքների շրջանակը - 18735քմ

Կառուցապատման մակերես – 2.238քմ

Բարեկարգման մակերես – 7.057քմ

Կանաչապատման մակերես – 9.440քմ:

Հիվանդանոցն ապահովված է լինելու ջրի, էլեկտրաէներգիայի և գազի առանձին միացումներով:

Նախագծող ԲԿ-ի գազաֆիկացման գործընթացը կկազմակերպվի «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 19/12/2019թ. տրամադրված տեխնիկական պայմանի համաձայն՝ կաթսայատան գործող d=108 գ/ճ գազատարից:

Էլեկտրասնուցման գործընթացը, համաձայն «Հայաստանի էլեկտական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 19/12/2019թ. տրամադրված տեխնիկական պայմանների կկազմակերպվի ՏԵ3324-ի 0.4 կՎ հզորության վահանից:

Բժշկական կենտրոնի ջեռուցումը նախատեսվում է իրագործել վերակառուցվող կաթսայատան միջոցով: Կաթսայատան շահագործումը կիրականացվի ջրային չորս կաթսաների միջոցով բնական գազի այրմամբ: Վերակառուցվող բժշկական կենտրոնում կաթսայատան հարևանությամբ նախատեսվում է նաև հեղուկ վառելիքի համար նախատեսված պահեստարան:

Կաթսայատան ջուրն օգտագործվելու է միայն ջրաջեռուցիչ կաթսաների և ջերմային ցանցերի միանվագ լցման համար, որը հետագայում կլրասնուցվի համակարգում ջրային կորուստների առաջացման դեպքում: Արտադրական հոսքաջրերի առաջացումը բացառվում է, քանի որ կաթսայատանը ջրապատրաստման գործընթաց չի նախատեսվում:

Նախագծվող ԲԿ-ի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացները կազմակերպվելու են գործող շինարարական նորմերի ու կանոնների, ինչպես նաև «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրամադրված (05/11/2019թ.) նախագծման տեխնիկական պայմանի (ԱՄ 166) համաձայն: ԲԿ-ի ջրամատակարարման համակարգը կկազմակերպի գործող համակարգով, այն է՝ Քոթանյան փողոցով անցնող համայնքային ջրագծից:

ԲԿ-ի համալիրից կոյուղաջրերի և կենցաղային ջրերի հեռացման համար, ըստ տեխնիկական առաջադրանքի, նախատեսվում է նոր դիտահորի կառուցում ԲԿ-ի

կոյուղագծի և Քոթանյան փողոցով անցնող համայնքային կոյուղագծի (d=300 մմ) միացման կետում:

ԲԿ-ում նախատեսվող իֆեկցիոն բաժանմունքից առաջացող բժշկական արտահոսքերի և կոյուղաջրերի հեռացումը կկազմակերպվի 1.5խմ/օր հզորությամբ «ТОПАС-С 8Пр» անհատական մաքրման կայանից՝ համակցված УОБ-SDB-550 ուլտրամանուշակագույն ախտահանման սարքով, որտեղից էլ մաքրված ջրերը միանալով ԲԿ-ի կոմունալ-կենացաղային ջրերին կհեռացվեն նախատեսվող դիտահոր:

«ТОПАС-С 8 Пр» մոնտաժային սխեման ներկայացված է և նախատեսվում է տեղադրել ԲԿ-ի գազոնապատ հատվածում՝ գլխավոր մուտքի դարպասից աջ և մոտ 17մ հեռավորության վրա:

Շինարարական աշխատանքների տևողությունը հաշվարկվել է 30 ամիս:

Շինարարության ժամանակ բնառեսուրսից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և աշխատողների խմելու, կենցաղային նպատակների համար: Տեխնիկական նպատակով, աշխատողների կենցաղային և խմելու նպատակով ջրամատակարարումն իրականցվելու է գոյություն ունեցող ջրագծից: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (35 մարդ) և կազմել 547,8մ^3/շին.ժամ կամ 0.830մ^3/օր: Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 9.202մ^3/շին.ժամ: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 9.749,8մ^3/շին.ժամ:

Շինարարության ժամանակ կատարվելու է մոտ 109մ^3 ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որն ամբողջությամբ կտեղափոխվի Թալինի համայնքային աղբավայր:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում՝ 2.815մ^3 (49,71մ^3+2766մ^3) ծավալով շինարարական աղբը և ավելորդ գրունտն է, որն ամբողջությամբ տեղափոխվելու է համայնքային աղբավայր:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ շինարարական նյութերի ձեռք բերումը կիրականցվի լիցենզավորված մատակարարից, կազմակերպություններից և կապալառու կազմակերպության արտադրական բազայից:

Բժշկական կենտրոնի վերակառուցման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կարող են առաջանալ հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման արդյունքում: Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները կանխարգելելու և շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված է.

-աշխատանքների սկիզբը աշխատողներին՝ այդ թվում նաև վարորդներին հրահանգավորել ըստ աշխատանքի անվտանգության կանոնների և պատշաճ եղանակով գրանցել անվտանգության վարման գրանցամատյանում,

- շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվելու են հրդեհաշիջման առաջնային միջոցներով, առաջին բուժօգնության դեղատուփով, իսկ աշխատողներն անցնելու են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում/պատրաստվածություն,

- բանվորական և ղեկավար կազմն ապահովվել սեզոնային արտահագուստով, անվտանգության սաղավարտով և այլ պաշտպանիչ միջոցներով,

-հեղուկ նյութերը և քսայուղերը տեղափոխելու շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահելու հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

ՇՐՋԱԿԱՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԻԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ - ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԻԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- շինարարական մեքենաների վառելիքի լիցքավորումը և քսայուղերի հետ առնչվող բոլոր գործողություններն իրականացնել հատուկ մասնագիտացված կենտրոններում,
- հնարավոր վնասվածքների, պատահարների դեպքում տուժածին ցուցաբերել առաջին բուժօգնություն՝ անհրաժեշտության դեպքում տեղափոխել համայնքի բժշկական կենտրոն,
- շինարարական հրապարակում ապահովել արտակարգ իրավիճակների մասին պատմող և արձագանքման քայլերը լուսաբանող պաստառներ/պլակատներ,
- ժամանակավոր ցանկապատել շինարարական հրապարակը,
- շինարարական աղբը կանանոնավոր հեռացնել համայնքային աղբավայր,
- հրապարակում տեղադրել կենցաղային թափոնների համար նախատեսված աղբամաններ,
-շինարարական հրապարակի ջրցան և փոշու արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերի սահմանում,
- շինարարական մեքենաների տեղաշարժն իրականացնել սահմանափակ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքը ծածկել,
- աղմուկ առաջացնող աշխատանքներն իրականացվեն թույլատրելի մակարդակների սահմանում և օրվա ցերեկային ժամերին՝ 14:00-18:00,
- շինարարական նյութերը ձեռք բերել լիցենզավորված մատակարարից,
- վառելիքի և նավթանման նյութերի պահումն իրականացնել բետոնե/ մետաղական կամ ավազե հիմքերի վրա,
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների ընթացակարգերը և կոնտակտային տվյալները պաստառների ձևով փակցնել հրապարակում,
- մեքենաների վառելիքի լիցքավորումը, քսայուղերի փոխարինումը կազմակերպել շինհրապարակից դուրս և մասնագիտացված կենտրոններում,
- տարածքը վերականգնել և իրականացնել հետշինարարական բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

Կանաչապատման աշխատանքների շրջանակում գոյություն ունեցող կանաչ գոտում նախատեսվում է 9440 ք.մ մակերեսով լրացուցիչ սիզամարգերի իրականացում: Կանաչ գոտիները հետագայում ԲԿ-ն կարող է համալրել նաև ծաղիկներով և այլ դեկորատիվ բուսականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան հատկացնել 2.920.300 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Արագածոտնի մարզի Թալինի համայնքապետարանում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության նախարարությունը, քաղաքաշինության կոմիտեն, ինչպես նաև Արագածոտնի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

-Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Թալինի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԵՐԵՎԱՆ * РА ЕРЕВАН * RA YEREVAN
ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ЭКСПЕРТНЫЙ ЦЕНТР
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543183
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական նորմերը, շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2017թ. մարտի 28-ի N12-Ն հրամանի պահանջների:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և պահպանումը:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Աքարա» ՍՊԸ կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ նշված պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հ. Մեսրոպյան

Ընդամենը՝ 5 էջ: